

ԱԼԷՌ՝ Մէկ մ'ալ այդ կերպ շնչա զընկուզ թող կոկորդը կենայ խղզէ :

Ըսէ՛ արի՛ Լնտոնիտս :

ՇԼԻՐ՝

Քաշըն կեսար :

ԱԼԷՌ՝

Իսկա վրկա՛ր :

Ընտանիքը կ'արիւնեմ, եթէ նորէն Կեսարի հետ
Համեմատես այրերու մէջ ընտրելագոյն իմ այրբա :

ՇԼԻՐ՝ Ընդիւն ներում շնորհեցէ՛ք : Չեք եղանակն է որ կ'երգեմ :

ԱԼԷՌ՝ Իմ խա՛կ օրերս : Երբ հասունցած շէր դատուիս : Ի՛նչ պահ կ'ըլլար
Իմ արիւնքս, եթէ հիմա այն ասեռուան պէս ըսէ՛ :

Իայց օ՛ն, երթանք : Թուղթ ու մելան բեր ինծի : Ըն՝ ամէն օր

Պէտք է ստանայ մէկ նոր ռզոյն, ապա թէ՛ ոչ՝ ես Եգիպտոսն

Ընմարդի կը դարձնեմ :

(ԿԸ ՎՅԻՆ)

(Շարունակելի)

Թարգմ. Գ. ՓԱԽԻԱՆԱՆ

ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Պայքարը՝ քաղաքակրթութեան ու վայրենութեան միջեւ, եւրոպական ազատ մտքի եւ այլապէս լիարժեքութեան մասին ոգւոյն միջեւ, պայքար դարաւոր ու անզոյ, որուն ամենէն քսամենիք եւ վսեմ գրեւազնեւրէն մին եղաւ Ատանայի ռդերբգութիւնը, կը շարունակուի միշտ, մեծ սաղմապի մը սուր ու վառ սաստկութեանէն յետոյ՝ հիմա խուզ ու դանդաղ խառնաշփոթութեան մը մէջ, ու պիտի շարունակուի մինչեւ որ Ումիզը վերջնապէս յաղթէ Արիմանին :

Աւստին, այդ պայքարին մէջ, լոյսին համար կռուողներուն առաջին շարքը, խեղճ ու սքանչելի Հայն է որ կը տեսնենք : Արիւն-լուա, ջրակտոր, առնէն լըսուած, ամէն կերպ վտանգներով պայքարուած, նորէն ան է որ կը ներկայացնէ յատկապէս զուգորդի գիտաւոր ուսման մէջը, եթէ ոչ գլխաւորը, ինչիկեան հողին վրայ հայ արեւմտահողման կաթմբը լոյսովն է որ ասիական օգնաւ, եւ ազատական թուրքերուն իսկ ամենէն անկողմ-ները ըմբռնեցին թէ՛ նոր բուռած բեծմին մէջ ինչքան մեծ չափով կենդանի էր մնար հին բեծմը, հին բարբառոյ մտայնութիւնը, — եւ հայ շարժարանքի այդ յիշատակաւոր՝ վայրագորէն ապաղուցանելով երբեմնի խառկանքը եւ իսկական լուրջ կուրս ու բարեկուրդութեան պէտքը, պիտի նպաստէ անշուշտ Զարթոյնի ոչ մի մղում մարտին առեկա արագ եւ աւելի հինգական յաղթանակ մը ապահովելու : Աղէտքէն ի վեր, հայ ցեղին ամբողջ կեանքը, գործը, ճիւղը՝ Արշարունիութիւն պահանջող աղաղակի մը մէջ կ'ամփոփուի : Իր բոլոր ուսման, իր բոլոր բերանները, իր պատրիարքը, ազգային ժողովը, մասուլը, իր խորհրդարանական ներկայացուցիչները, իր

կուսակցութիւնները կը պահանջեն սուտի, խաղախութեան, կողմակցութեան հին քաղաքականութեան մէկզի գրուելը, աւաղակային ու քաղաքական բարեկրու սանձումը, մարդկային արժանապատուութիւնն արատաւորող հրէշներու պատուհասութիւնը, այսինքն ամէն ինչ որ անհրաժեշտ է՝ ոչ թէ միայն Հայուն լոկ ցեղային շահերը պաշտպանելու, այլ մահաւանջ Օսմանեան պետութեան իսկական վերանորոգման համար : Ինչպէս մահմետական ազատականներու ամբողջ աշխարհը քանի մը ցանցաւ զեղեցիկ բացառութիւններէ զտա՞ փոխանակ այդ անաւոր աղէտքին սաղորդեւրուն հանդէպ որոշ ու անփրկապիք դարձրին եւ զոհերուն նկատմամբ ասպետական պայծառ համակրութեան մը դիրքն առնելով ինքզինքը փառաւորելու եւ պետութեան մէջ՝ ազատականութեան գլխաւոր սպասարկուն ու մարտիկը ինքն իսկ ըլլային ապացուցանելու, խնցաւ երկդիմի, անվերանման, քողաւոր քաղաքականութեան մը մահաւանջութեան մէջ, Հայ մըն էր, Պապիկեանը, որ միմիայն իր առողջ, չիտակ ու քալ հողին շարժուցիչ գեղեցիկութեամբ՝ մէկ հարուածով կ'աւաղէ պատեղ այդ փոքրոգի քաղաքականութեան ցանցը, եւ ստիպեց զամենքը ճշմարտութիւնը խոտորմանելու, իր ձեռքովն իսկ բարոյապէս լիովին պատեցի՝ ամբողջ աշխարհի աչքերուն առջեւ՝ բուն ռազմագործները, եւ արժանապաւ Արշարունութեան մեծ հերոսներու ախեղբայական Տաւադրին մէջ իր անդրին ունեւորու : Այսօր, Հայ մըն է զարթեալ : Դուրեմա պատրիարքը, որ կը լրացնէ ինչ որ Պապիկեան սկսած էր, բարոյական պատեթէն յետոյ՝ կը պահանջէ իսկական պատուհասութիւն շարժադրման : Իր պատճառաբանութեամբ ու ամուր հրաժարականը մեծ արարք մըն է, արարք մը որով անգամ մը եւս Հայութիւնը՝ այդ պետութեան ձեռքով՝ Արշարունութեան ճամբան մատնանք ի ընէ Օսմանեան պետութեան ճակատագրէր ներթապէս վարդոյններու :

Հայկական դեր, լազաբախանգ դեր, զոր
դարձրել էր վեր կը կատարէ՝ հայտնանքի եւ
արիւնքներու մէջէն՝ հայ ցեղը, միշտ հաւա-
տարիմ իր առաքելութեանը, որ է Արեւմտե-
կան բարձրագոյն քաղաքակրթութեան փո-
խանցին ըլլալ Արեւելքի մէջ, Մենէ ոմանք,
նկատի ունենալով Հայուն նիւթական սկա-
ւութիւնը, կը կարծեն թէ այսպիսի առաքե-
լութիւն մը ինքզինքնի վերադարձը զտառե-
ցական մեծամտութիւն մըն է լոկ, իսկ
եւրոպացիներէն քիչեր են որ ըմբռնած եւ
գնահատած են այդ առաքելութիւնը, անոնց
մեծամտութիւնը տկար ու զոքող փոքրիկ
ծողովուրդ մը միայն կը տեսնէ մեր մէջ, եթէ
նոյն իսկ իրաւ ըլլալ որ մեր մեր յաւակնու-
թեան մէջ ինքնախարհութեան լատի մը
կայ, եւ չեն որ պարի գառապարտէի այդ
սփոփող, քրտայայտող, սեղանող, ազնուացնող
ինքնախարհութիւնը, Անհնգութեան ինչ է,
զգուշիկ է ընդունելի թէ մենք ուրիշ քան
չենք բայց անգոր, ողորմելի ժողովուրդ մը,
իր խեղճութեամբ միայն շահակն և Առանց
վիճ պարանքի մը (illusion), այսինքն առանց
Հաւատքի, աղօք մը ինչպէս անհատ մը՝ չեն
կարող հասնիլ իրական մեծութեան։ Մեր
ցեղին վիճակաւ աշխիւ Առաքելութեան մը
հաւատքը՝ կը լուսաւորէ մեր թշուառութեան
արեւնոյն ու մոխրապատ գրգռակները եւ
զանազան ծրարներէն աւելի թանկագին կը կա-
ցուցանէ, ի՞նչ փութ որ աշխարհ իր մեծա-
մասնութեան մէջ զեռ չիտեսնէր ու չըմբռնէր
մեր այդ Առաքելութիւնը։ Արեւմտը, Հեղահնի
տկար, բզբտուած, Հարիւր ու գեթութեան
բոլոր արհաւիրքներն ու նուաւատացումները
նախնայած ցեղ մըն էին, բայց իրենց ստաւ-
պանքներուն խորէն՝ անոնք միշտ հզօր ու
հպարտ մնացին, ինքզինքնի աւելի մեծ հա-
ւատացին քան զիրենց խոշտանգողները։
Իրենց մեծ քանապատկանքը, մարդարէնը
— անգրգռելիութենէն կը քարոզէին թէ այդ
ցեղը բարոյական մեծ դեր մը ունէր կատա-
րելու, — Աստուծոյ թեան ու մարդկութեան
միջեւ միջնորդի դերը, այն պատճառով որ այդ
մարդարէնները կ'իջգէին իրենց խորիմ քեր-
թութեանները, աշխարհ կ'արձապարէր ու կ'ան-
գիտէր այդ ցեղը, բայց Հեղեթեան բարոյա-
կան ուժը յաղթեց զինքն արձամարդ գորա-
ւորներուն, Առաքելութիւնը որ երազով սկսած
էր, իրականացաւ, Բարոյական ուժը՝ մեծա-
գոյն ուժն է և իր ամբողջ պատմութեան մէջ՝
Հայը, ինքնական ուժով յաճախ միջակ,
բարոյական ուժով հարուստ, ըլլալն ապացու-
ցած է։ Մեր հաւատքը մեր ցեղին Առաքելու-
թեան զրաջ՝ լոկ պատարնը է ուրեմիս Անցեալ-
ին մէջ ու ներկային, Հայը կը գտնենք
մարդկային բարձրագոյն քաղաքակրթութեան
համար կոտող, ստաւաղող, զոհուող, իղապա-
փարի մը սիրտին է որ մեր ժողովուրդը դա-
րերու ընթացքին մէջ՝ չարարուած ու յօշո-
տուած է։ Եթէ Գուրգին կամ ուրիշ ասիական
ցեղերու պէս՝ նիւթական բիրտ ուժի միայն

փնտրէր եւ իր կոպիտ հանգստութիւնը միայն
սպահովել ցանկար, կը բաւէր որ ընդգրկէր
տիրանիքը ցեղերուն կոտորէ, իւրացնէր
անոնց բարքերը, իր խեղալատէր հոգին նախ-
ընտրած է՝ տառապիլ, կանգուն պահելու
համար բարձրագոյն քաղաքակրթութեան մը
զբօլը, եւ յաջողած է։ Նոր ժամանակներուն
մէջ, կը տեսնենք Առաքելութիւնը աւելի
յատակ, աւելի որոշ կերպով կատարուած՝
Հայուն ձեռքով, Լորիս Միլիթեան մը Ռու-
սաստանի մէջ, Միլեթին խան մը Պարսկաս-
տանի մէջ, Նուպար փաշա մը Եգիպտոսի մէջ,
եւ ուրիշներ, այդ նոյն Առաքելութեան մեծ
զբօլակիրները կը հանդիսանան, իսկ Տաճ-
կաստանի մէջ, ուկրզէնի ի վեր, եւ մասնաւոր
վերջին յիսուս տարուան միջոցին, աւագին
է Հայուն դերը, Օսմանեան համալսարանե-
րուն իր տուած եւրոպայիտ մեծ ուսուցիչնե-
րով, Թուրք մամուլին ու Թատրոնին իր
բերած աշակցութեամբ, արեւմտեան գաղա-
փայնները, ճաշակի, ճարտարուեստի եւ գե-
ղարուեստներու թուրք աշխարհին մէջ տա-
րածման ջանաւորութեամբ, օսմանադրական
բեժիմի ընդգրկման մասին նախ իր ինքնու-
րոյն նախահեռուութեամբ՝ յետոյ Օսմանեան
միջոցաւ ուղղակի թեալարութեամբ Թուրքե-
րուն տուած իր դերութիւնովը, աշխարհիկ
հայրենասիրութեան յղացման՝ փոխանակ իս-
լամ կոթակեան ժողովրդի ըմբռնութեան թուրք
երիտասարդութեան մէջ թափանցելուն իր
վերջոյնն օրինակովն իսկ նպատակովը, ու
վերջին ի վերջոյ իր մարտիրոսներուն արեւմտի
ու իր փրփականութիւններուն աշխարհ գոր-
ծունէութեամբ թուրք հին բեժիմին ղէմ
տնիգերական աստուծոյն յարուցանելու եւ
զայն իսպառ մահուան դատապարտելու խորա-
պէս օգնելով, եւ իր պատասխան հերոսնե-
րուն յանդուրդ մեծակերով թուրք կարծե-
հերուն համար ընդհանուր ազատագրման հա-
մար յեղափոխական կողմից գործունէութեան
մը ռազմական գաղափարով, Հայը՝ թուրք
ազատականներուն հակաբռնապետական ընդ-
վզման յաղթանակը պատասխատ է։ Օսմանե-
ան պիտուէր մեծակերով օսմանադրական բեժի-
մին հաստատումը կարելի դարձնացած եղաւ։
Մենք դէր, ազնիւ դեր, որուն համար
հպարտ լըլլալու են մեր ցեղին վրայ հաւատք
ու նիւթալու իրաւունք ունինք։

Այդ հաւատքը պէտք է կորսնցնենք եր-
բէք, մահաւանդ մեծ աղէտներէն յետոյ որ
մեզ կը հարուածեն և Կիլիկիան արաբներէն
բռնէ հանդէպ, միայն մեր Առաքելութեան
այդ Հաւատքն է որ կարող է մեզի սիրտ տալ,
ուժ տալ, միջթափանց տալ, եւ պահպանել
մեզ՝ որպէս կը ցեղը կարենալ շարունակել իր
դերը՝ իր փառքին եւ Արեւելքի օգտին համար։

* *

Այս բոլորէն չեմ ուզեր որ հետեւեցին —
եւ տարիներէ ի վեր գրածներու հետեւող մը
A.R.A.R.®

արդէն չպիտի հետեւցնէ — թէ հակամէտ եմ խրախուսելու անմէջ յոյսորոտանքը, կոյր անխոհեմութիւնը, անտեղի եւ անգիտակալ յանդգնութիւնները: Հայ ցեղին այս առաքելութեան վրայ հուսադրին մէջ չկայ ո՛չ յոյսորոտանք, ո՛չ ալ նշխարական պատրաստակալութեան դիտում: Բնազգային զգացում մըն է որ կը յայտնենք՝ պատմական երեւոյթներով հաստատուած, թուրք ազատականները որ անցեալ տարի հանդիսաւոր յարգանք մատուցին հայ նահապետներու գերեզմանին՝ համարելով զանոնք ռազմական օժանդակ անհատական, իրենք իսկ ընդունած եւ ազնուօրէն հռչակած եղան մեր ցեղին այդ Առաքելութիւնը: Այդ Առաքելութիւնը ոչինչ ունի թշնամական ո եւ է զրացի ցեղի դէմ, այլ ընդհանրական իր նպատակն է գերադէպ քաղաքակրթութեան մէջ բարեգործ տարրերի ամենունը: Վրայ՝ Նոյն իսկ այն օրը երբ այդ առաքելութիւնը լիովին կատարուած ըլլայ, Հայր ատով վերադառած պիտի չըլլայ ինչ երբեմնի քաղաքական զօրութիւնն ու անկախութիւնը: Պայմանները յայտնապէս անհնար կը կացողացան զայդ, է Հայք ամբողջութեամբ որդապէս հասկցան զայս՝ մասնաւորապէս Սամ. Սամատագրութեան հաջգումն ի վեր, եւ անխնայաբար լծուեցան զուտ քաղաքակրթական ընդհանուր գործին: Հին ու Նոր Թուրքերուն ասիակ չհասած չբերածք ըլլալն էն է: Կլիելիոյ աղէտին մէջ՝ ասիական անկախութեան ձգտումներ տեսնել կարծելիին իրենք թէ՛ խելքին թէ՛ սրտին անպատուարի արագը մըն էր: Հայր ուրիշ նպատակ չունի թայց իմէ արեւմտեան քաղաքակրթութիւնը լրջօրէն, հիմնովին, ամբողջապէս հաստատուած տեսնել (երեւելքի մէջ, իրեն եւ ամենուն բարբրէին համար: Վարձատրութիւնը որուն կը սպասէ՝ այդ գերը կատարելով՝ բաւ ըստական փութն է: Ասիակ քաղաքացի ըսելը՝ յոյսորոտըն է՛, անխնայութիւնն է՛: Այլ է՛, Վրայն թէ՛, ամուր մնալով նաեւ գերը ցեղին այս առաքելութեան խորիմ համոզման վրայ: Կողմին բարձր բունելով այդ մեծ գերին գիտակցութեամբ, պարտաւոր ենք գերին գործադրման եղանակին եւ միջոցներուն մէջ՝ դիմել մեծ շրջապայքութիւն, խանութիւն, ճարպկութիւն, — յապուած լինելուն որունք չեն վատրեր կոյտը, որուն ընդհակառակն ամենին սուր ու արդիւնատու ձևին են: Այսպէս պէտք է վարուինք, նախ որովհետեւ միայն այդպէսով ո եւ է գործի մէջ՝ կարելի է յաղորդութեան յանգիլ, եւ երկրորդ՝ քանի որ մեր ցեղին նշխարական զօրութիւնը շատ փոքր է ու թշնամիները քաղմութիւն ու հզօր, քանի որ լուրջ պայտասուն եւ օգնական գրկիմէ ոչ քաղաքացի, ու կատարուելիք գերը փափուկ ու զօրութիւն է եւ շատ մը անապոյ թայց ուսմիջ չանկու աննպաստ, անհրաժեշտ է ո եւ է զգուշութիւն չկանայի մեր գործունէութեան եղանակին մէջ, որպէս զի գործը այս կարելի եղածին չափ աւելի արագ եւ ազատազգիւն

կարելի եղածին չափ նուազ սաստկացնելով վատնները որ մեզի կը սպառնան:

Կարենալու համար կատարել այդ վե՛հ դերը, Հայր պէտք է որ նախ ապրի, տեսէ, ուժ ունենայ, եւ պահպանէ իր ցեղային ինքնութիւնը, որուն մէջ իսկ կը գտնէ այդ գերին կատարման մղող բնազգական ներշնչում եւ աւանդական մղումը: Պէտք է ուրեմն գիտնանք իմաստներն լարել թէ՛ մեր յարաբերութիւնները մեր զրաջական նշաններուն հետ եւ թէ՛ մեր ներքին կեանքը, մեր նշխարական գոյութեան վրայ կատարած վատնները հնազանդութեան մեր ցեղային անհատականութիւնը երդելու, տկարացնելու, հալոցնելու ձգտող տարաքին ու ներքին ազդակներուն դէմ մարտնչելու համար:

Անկարելի է չընդունիլ, զգաղցաբար, որ այդ խոհեմութիւնը, ճարպկութիւնը, «քաղաքակրթական զգացողութիւնը», որով մեր հայրեր շատ հարուստ ցուցանած են ինքզինքնին, պակեցան մեր մօտ այս վերջին մէջ տարուան մէջ, ինչպէս արդէն պակսած էին մեր 15-20 տարուան յեղափոխական գործունէութեան մէջ: Խանդը տիրապետող եղաւ, առանց հեռաստեղծեան, զործնական ոգիի, պատշաճեցումն անհրաժեշտ սկզբունքին ըմբռնման հետ միասնապէս: Եկեղեցիներու բնմէն աղմուկից ճառեր, փողոցները օրն ի օրուն երգեր, գինալսածութեան ցուցամոլ հանդիսատարութիւններ, հայ թագաւորի պատկերներու մեծացող վաճառում, հայոց հին պատմութեան քաղուած ողբերգութեանց յերկայացում, մեր յեղափոխականներէ մօտաց չափազանց ժողովայն արարումներ, այս բոլորը անտեղի էին, աւելորդ եւ երկու տեսակէտով վատակար, նախ որ ժողովուրդին ուժերը կը վատնուէին յուսպէտա. — որովհետեւ պոռով կանչելը գործ տեսնել է՛, եւ բոպէն թանկագին էր կատարելու համար իսկական գործը, որ է ցեղին վերջերը դարմանել, ընդհ. վերանորոգման ջանքերուն լրջօրէն մասնակցել, եւ երկրորդ՝ որովհետեւ այդ բոլոր ծայրակիլ եւ անկելի աղմուկը՝ զոր պիտութեան բոլոր ցեղիութեան մէջ սիմփուն Հայերն էին այդպէս բարձրացնողը՝ պիտի նպաստէր անշուշտ խաւարի տարբերուն Հայոց դէմ արդէն իսկ գոյութիւն ունեցող հեռ աստակացնելու, նոյն իսկ հայտնուող չեղող մասնատանկներու մէջ սրտնեղութիւն ու կասկած մտոյ ցանկու, եւ Հայոց դէմ զաւել յաջողութեմ վերաբացնելու: Ի՛նչքան անհրաժեշտ, անմիջական հարցեր կային մեր ներքին կեանքին մէջ՝ կաղաքակրթութեան, որոնք մնացին կամ կիսկատար, կամ առանց լուծման: Ի՛նչքան ջանքեր կարող էին, պէտք էին ներքինի Հայոց կողմէ՛ մասնատանկ ցեղիութեան միտքը լուսաւորելու, անոնց վարկներուն վրայ բարոյական ազդելու համար, եւ չեղան: Հայերը հռչակուած են իբր մանկատանի մէջ Թուրքին յետոյ լուսաւորն թրքախոս ցեղը, երբեք թրքի մը չէր եղած աւելի պատմե՛

Թուրքերէնի այդ հմտութեան կիրարկումը օգտակար ընկելու համար թէ՛ Հայոց շահերուն եւ թէ՛ պետութեան ու նոր բեմիմին ընդհանուր շահերուն: Ուր էին մեր թրքագետ գրողները, աստնաբանները, Թուրք մամուլին մէջ քանի՜ յօդուած երեւցաւ Հայու հնգրով գրուած: Հայ ազգին կողմէն ամբողջ մահմանականներուն խօսող: Միմայիլի էր տեսնել Թուրքերուն ուղղունք քաղաքային յօդուածները՝ մերթ շատ նպաստամտօրէն պարունակութեամբ, եւ զոր սակայն ոչ մէկ Թուրք կարգաց երբեք. պէտք է՛ր որ մեր խմբագրականները իրենք իսկ այդ յօդուածներուն թրքերէն թարգմանութիւնը ուղղակի ըլլային Թուրք թրքերէն թրքերէն: պէտք է՛ր որ մեր թրքագետ գրագէտները ողողած ըլլային Թուրք թրքերէնը՝ մահմանական հասարակութեան համար յատուկ գրուած յօդուածներով, — յօդուածներ՝ ո՛չ ֆրանսական հրապարակագրութեան կարուկ, յարձակողական, կծու ոճով խմբագրուած, այլ թեթեւօրով, ճապկութեամբ, համոզիկ ու զգոյշ ոճով, ուր եւրոպական քաղաքակրթութեան բարեքնները, Հայուն զերը Օսմանեան պետութեան մէջ՝ պիտի բացատրուէին Թուրքին, Քիւրտին՝ իրենց մատչելի, իրենց մտայնութեան մօտիկ, արեւելեան յանկուցէի պատկերաւոր, առակախառն աստիճաններով: Օսմանեան խորհրդարանին մէջ մեր երեւոյթաններուն սանձքը բարեկանեցողութեամբ, ազգայնութեամբ, ազատասիրութեամբ առգործուած մարդիկ են, անտնցմէ մին՝ Զօհրապէ՝ առաջանդով լեցուն: ցոյց տուին քաղաքութիւն, ազատամտութիւն, հմտութիւն: քայց ինձի կը թուի թէ չգիտցան կամ չուզեցին խօսիլ ինչպէս պէտք է խօսիլ Արեւելցիներու, եւ այն ալ մեծ մասամբ տղէտ Արեւելցիներու: Խօսեցան օրպէս թէ եւրոպական խորհրդարանի մը մէջ ըլլային: պէտք էր նախ եւ առաջ՝ հրապուրելին իրենց ունեցողութիւնը այնքան արեւելագործ, ճկուն, գրաւել ու թրքախոսող պիտի ճանօտութեամբ մը, որ իրենց տարածել ուղղած գաղափարները անգլալի կերպով, անդի-մազլի կերպով սուղալի մոդուած ուղղիներուն մէջ, Երանի՜ թէ գէթ այսուհետեւ Հայը կատարէ իր դերը այս հեռով, որ ամենն արդիւնաւորն է եւ անհրաժեշտը: պէտք է Թուրքին աւելի Թուրքի պէս խօսիլ ու գրել՝ Թուրքին մօտին մէջ մտցնել ուղղունք եւրոպական գաղափարները միակու համար լայնողական: ատոր համար՝ Հայուն չի պակսիր ո՛չ ազականգ, ո՛չ ճկունութիւն: Ռային պէտք ամէն վայրկեան ալքի սուլել ունինալ Հայը թէ Տաճկաստանը Ֆրանսա չէ, այլ արեւելեան երկրի մը: ուր գրողը ու խօսողը իրենց դիմաքն ունին եւրոպական զարգացում ունեցող փոքրաթիւ հասարակութեան մը քով՝ անմայրածիր զանգուած մը՝ նստրէտաին Հոնայով միայն սնած Արեւելցիներու:

* * *

digitized by

Թրքահայ հասարակութեան նիւթական գոյութեանը սպաննացող վտանգէն աւելի մեծ վտանգ մը՝ իր ցեղային կազմաձեւին քայքայման վտանգն է՝ նոյն իսկ ներքին տարալուծման հետեւանքով: Աւելի մեծ կը համարմի այդ վտանգը, երկուս պատճառով: Նախ՝ որովհետեւ նորախոր չարգեւոր եւ թալանի հաւանութեան ինչը շատ նուազած է. կառուվարութիւնը կառուելի կասեցնել կորովհետեւ իր շարժ այդպէս կը պահանջէ. եթէ մենք ալ մեր կողմէ զիտը վարուինք, եւ աւելորդ ժխորով ու յիստրանքով նորէն պատուակ չստեղծենք մո՛ւթ տարբերուն եղեռնական գործունէութեան, նոր ողորդութեանց պայթումը անհաւանական կը թուի բոլորովին: երկրորդ պատճառն այն է որ՝ նիւթական գոյութեան շատ աւելի կարեւոր է ազգի բն թաղայական գոյութիւնը: մարդկային հոտ մը որ որոշ հոգեբանութիւն մը, ինքնառիպ մտայնութիւն մը, յատուկ խառնուածք մը, աւանդութիւններ, իտէպ մը չաւնի՝ ապրիւր է կամ ոչ, երկրորդական նշանակութիւն ունի մարդկային քաղաքակրթութեան բարձրագոյն շահերուն տեսակետով: Էականը՝ ընկերական կեանքին մէջ՝ իւրաքանչիւր ցեղը դարաւոր աւանդութիւններով կազմուած ինքնառիպ թաղայական շէնքն է, որով ամէն մէկը իր յատուկ դերը կը կատարէ մարդկութեան մէջ: Այդ մեր ցեղային շէնքը վտանգի մէջ է, մեր մէջն իսկ թղիտղ կարգ մը թեւութիւններով՝ որոնք տարօրինակ պիտի նպաստեն էթն տեսնէ՝ ազգայնամով Թուրքերու համաւաճման ծրագրինը:

Մեր այդ ներքին թեւութիւններն են 1. Անուանումն սիւսման կիրարկումը լրագրական պայքարի մէջ 2 կուսակցամոլութիւն: 3. Հակակղերական եւ հակաուղղական պայքար: 4. Սեմամանակ ու սխալ հասկացում ընկերայնականութիւն: Անտրոնորութիւններ չեն, առաջ. 13—20 տարիներէ ի վեր, մեր հայ ազգային-յիդափոխական գործունէութեան անբաժան ընկերները եղած են, եւ անոնք են գլխաւոր պատճառը որ մեր «հակական» դատը լիճեցաւ ու այսօր կը գտնուիք այնպիսի հանդամանքներու մէջ ուր մեր ամենին կոյղզավիշ յիդափոխական կուսակցութիւնները, ՅՆԴ յօդուածին, Մայիսեան ծրագրին կամ նոյն իսկ ապակեղորայնամով խօսքի իսկ ընդ կարեւորելի հեռու, նոր չարգեւոր առաջին առնելու եւ Հայոց ո եւ է անկախութեան ինքնուրոյնութեան փափագն անգամ չունինալը: հարազատ օմանքն ըլլայր հաստատուելու հեւ ի հեւ Զանքերով քրտնելու մէջ կը կեդրոնացնեն իրենց եռանդը մեծ մասը: Իհնէր—առանք արդարապէս լու, եւ հազար անգամ աւաղելով — որ երէկ գոնէ՜ կ'ընտոտ, անստողը, մուկ կացութիւն մը կար մը դիմացը: մեծ շարքերուն արհաւիրքէն յետոյ՝ ազգը՝ շուարած, հաւաքական չլինելով, Թուրքերու, պատակտուած, յիդա-

փոխականի եւ հակադիպոփոխականի բաժնուածութիւնը, կացութիւնը վարդապետն չէ, բայց աւելի որոշ է. օսմաննաւ սահմանադրութիւն մը կայ որ իր սովորութիւնը ապացուցող գիմնադրով Համախառն դասին եւ Աստանայի իրթխարմ անպատուութեան. պատմական Սւրողան, միջամտութեանց քաղաքականութիւնը ձգած՝ կը խրախուսէ Ժէնիւ-Թիւրքերուն վերակենդանացման ճիւղը, Այս նոր կացութեան հանդէպ, պարտաւոր ենք այլ եւս պայծառ, խառնական, գործնական բաղաքականութիւն մը ունենալ մեզի համար, որպէս զի ներկայ կացութեան մէջ ինչ որ կարող է ըլլալ մեզ համար վտանգաւոր՝ նեւազննէք, ու անկից քաղէ՛ք ինչ օգուտ որ կարելի է մեր ցեղին։ Այլ յեղափոխականի եւ հակադիպոփոխականի երկպառակութիւնն անիմաստ է։ Ամենքը այսօր կը գործին օրինական հողի վրայ, Ատեն է որ ազգովին միասնաբար եւ միարժեք աշխատինք մեր գործին հանդէպ մեր պարտքը կատարելու։ Ուրեմն այսօր ներկայ կացութեան մէջ մեր երէկուան յանցանքներուն կրկնումը բացարձակապէս անհասկանալի, անբացատրելի եւ անհրաժեշտ է։ Վարդապետութեանց, թաքթիքի, խառնուածքներու, ճաշակներու առարբերութիւն ըմբռնելի է. բանակները անխառնակի եւ եւրոպական, բայց անձնական տատկութեանց սահմարձակութիւն, վարչոց անարգական բացատրութիւններ, կոպտ ու գունդիկ անուանարկում, ծնծկուածք, պիտուական գաղափարներու առկա գզուշտութիւնը անարդիւն գործիչներու միջեւ, ցաւաւ է խորապէս, ու մեզ տկարացնելու եւ օտարներու առջեւ խայտառակ ու ծիծաղելի կացութեան մը միայն կը ծառայէ։ Ու կան ճգնաժամային վայրկեաններ ու ազգի մը բոլոր կուսակցական ու անհատական վէճերը պէտք է կտանք ընդհանուր գերազանց շահերուն հանդէպ. այդպէս ըրին նոյն իսկ կրակոտ ու կռուաւոր ծիսասացիք եւր Մարտի հարցին ամօքիւ. քանի մը տարի առաջ Կերմանիոյ հետ պատերազմի երկիւղ ծագեցաւ պահ մը։ Մեզի համար ալ լճուկան է ներկայ քուէն։ Օսմանեան պիտութեան համար նոր դարագլուխ մը բացուած է. ամբողջ հին շէնքը սկսած է վերանորոգուել, նոր շէնքեր մէջ, ինչ պարի ըլլայ մեր ցեղին տեղը, դիրքը, ապագան, հարցը ցեղային, հաւաքական է, եւ ո՛չ կուսակցական. ամբողջ Հայութիւնը մէկ մարդու պէս պէտք է միութեամբ գործէ, իր զիրքը ձգէ, իր շահերը պաշտպանէ, իր ապագան ապահովէ։

Պէտք իսկ չկայ ուրեմն բացատրելու թէ այս պայմաններուն մէջ ինչքան անհրաժեշտ է անխմատ ու շնորհալուր քան է նաեւ «կուսակցականութիւնը»։ Ինչպէս է որ ամէն կուսակցութիւն ինչպէս ամէն անհատ, փառասիրէ կարելի իղածին չափ շատ օգուտ տայ իր ազգին. բայց գոտով ամէն քանի մէջ քիթը խօթիլ, ամէն բան ինք ըրած ըլլաւու յաւակնիլ, թոյլ չտալ որ ու եւ թանկ կատարուի

առանց իր միջամտութեանը. իր վէթօյին, խանգարել ուրիշին գործը՝ եւր իր մասնակցութիւնը չկայ հոն. ինքնագլուխ անորոշութեան լինել այնպիսի հարցերու մէջ ուր ազգին ամբողջութեան հաւանութիւնը անհրաժեշտ է, ազգին գերազանց ներկայացուցիչ համարիլ ինքզինքը՝ ազգին մէկ գործին մասնակցելով լով, — ասիկա կուսակցականութիւն է, եւ դատապարտելի է ինչպէս ամէն մուրաքիւն, Հեղինակութիւն վաստկցնողը՝ գործով ձեռք բերուած արդիւնքն է, եւ այդ արդիւնքին ծնցուցած սէրն ու համակրութիւնը. գոտով կարելի չէ սերտել։

Հակադիպոփոխական ու հակաանդալական պայքար, որ վերջնաժամ է ամենատղայական ու ամենամոտապար ձեռով, ինչպէս եւ «գրքական» ազատամտութեան, «տիրացուական» ընդհարարականութեան «խառնակախոտ», հին ցաւ եւ, գունդ 20) տարւան հնուէնեմը, ստոյն ստան Սնանիցի ընթերցողները գիտեն թէ որքան անդամներ գրած եմ, ինչի վրաբաղանութիւնը եւ հակակցելալանութիւնը մեր ազգային արդի հանգամանքներուն մէջ բերել մտցնելը՝ այնքան պատշաճաւոր ու գործնական է որքան Սոքրատեսիկոսն ըզգետաները Նեքրատոսն ըսակինքերուն հազդնելը։ Ինչ որ կը բնորոշէ մեր աշխարհ կամ նորկիւն «նոր-սերնակներուն», ազատամտութեան ծայրայիղ խանդավառութիւն մը չէ այնքան (ստիկա նորէն գեղեցկութիւն մը պիտի ունենայ), այլ պարզ խելքի պակաս, ողմտութեան, տրամաբանութեան, դատողութեան, իրականութեանց ճշդ իրա ըմբռնման անկարողութիւն, գիտական ոգիին — որուն անունով կ'երգուան — բացարձակ լայնակալութիւն, ներխուժել իր կաթողիկոս ցոյց տուած թերութիւնները մասնաւոր ըրած էի Անանիոսի նախորդ մէկ յօդուածովս, եւ յոյս յայնաժամ որ Լոյսիւրկան իբր Հայրապետ կարգ կանոն պիտի դնէ իշխանայն միաբանութեան եւ ամբողջ հայ եկեղեցական գործերուն մէջ. արդ, Թիֆլիսի ընդհարարական Կարծ թերթը ասորի պատասխան, կ'ընթացէ որ եւ կը սպասեմ իզմիրիկան Հայրապետէն»։ Իրեն մի միջփային (mythique բառի կ'օգտէ) անձնաւորութիւն դարձնել, ոչնչացնել հոգեւոր պաշտօնականի ընտրութեան կարգը, թերխուժել իրաւաբան կամ սահմանադրական կոնգրեսները մեր եկեղեցական սեփականութիւններ կատարական եւ մեր կուստուրական-դպրոցական հաստատութիւններ կարողութեան վերաբերմամբ, ստեղծել կեդրական թանկանութիւն Ժողովրդի վրայ եւ ձգտել իշխանայն «սուրբ» միաբաններին եւ նրանցից էլ աւելի «սուրբ» մեր տէրութեան իր արքայականութիւնը հաստատելու մեր բոլոր այն կուստուրական հաստատութիւններ վրայ, որոնք չփութեմ են հայ հոգեւորականութեան իրական արտաճութիւններ չլրանն հետ։ Եթէ տարական հասկացողութեան պակաս չէ, ինչ է աւելի՛ որ ներքին անորոշական, քառանգ,

ինքնակամ, « հակաամանադրական » ոգով հայրապետ մը եղած է. այդ կերպակները, զոր ուրիշներ իրեն տուն տուին, բաժնիս հակառակը չեն սպացուցաներ. իր գործերը պէտք է ի նկատի առնելով, և ոչ թէ կոտորակներ. Իզմիրլեան ինքզինքը միշտ յայտնաձ է գերազանցապէս օրինապահ, սահմանադրական գործիչ, և աղպէս ալ պիտի մնայ իր հայրապետ. պիտի գործէ ժողովրդին կամքին համաձայն, բայց « ժողովրդին » և ոչ այս կամ այն կուսակցութեան, և մնալով երկնշունչ պահապան ազգային այն առնչութեանց որոնց պէտք ունինք մեր ցեղային անկողնուրումներէն չկորսնցնելու համար : Եւ ինչքն ի նշագէս կարելի է հետեւցնել և կղերական բռնապետութեան սանդղման քանկուելով : Կայ աշխարհիս մէջ ժողովուրդ մը որ մեզի նախ ճշգրիտ և ազատ ըլլալ « իսկական կղերական բռնապետութենէ » : մեր ազգային կենսաբնական պաշտօնական աթոռներուն վրայ կղերականներ կը գնինք, որովհետեւ ուրիշ կերպ չենք կրնար ընել, բայց այդ կղերականները ազգին ամբողջութեան բաւելով կ'ընտրուին, և կը կատարեն դեր մը — հասկնալու է զայս — որ աւելի աշխարհական է քան միտաբանական : Մեզ արքայութիւն առաջնորդելու համար չէ որ Իզմիրլեանը կաթողիկոսական գահուն վրայ գլորնք և Դուրեանը պատարագաբան աթոռին, այլ օրպէս զի՝ մին, ամբողջ հայ ժողովրդին հետ, միւսը՝ թրքապահ հասարակութեան ներկայացուցիչ երկսիրտական ժողովին հետ՝ մեր ազգին գործերը վարեն, շահերը պաշտպանեն, մեր յատաշխիւթեանը աշխատին : վերջապէս մը ունենալու համար հակառակորէն հայաժողովներ պէտք չէ համարել մեր կղերականները, մեր ազգային կազմակերպութեանց մեր ձեռնադրութիւն ընտրուած նախադասներն են ինչո՞ւ հոտրել իրենց վարկը : Իրենց զերթը, զոր մենք առած ենք իրենց և որուն պէտք առնինք մեր ցեղային շահերուն համար, Գալով ընկերակցականութեան, պէտք կ'այ հարիւրներով անգամ ըլլալով կորսնալու թէ, ազգովին չարդի ու ձուլման վտանգի ենթարկուած ցեղի մը մէջ գալ Մարքսեան կրօնքը բարոյգէտ, ու հասարակաց վտանգին դէմ միանալու պէտք ունեցող տարրերուն մէջ ուր պատակաւ առնենք ստեղծելու ինչպէս անխելք ու վախճանաբար : Այս բոլորին վրայ՝ քարեքարաբար պարտաւոր մտնելու մեծամասնութիւն, մասնաշաղկապ իրաւաբանութիւն, Զայն-Հայրենեաց և Հայրենիքի, զի գրեն յաճախ, ու այդ սխալ և անքնական ձգտումներուն դէմ կը մղեն օղջամիտ ու գործող պայքարը : որ կը մաղթանք ինչ յուսով, աղքատացող պատկուի, Հայրենիքի, որուն վերերեւումը ամենամեծ օւրախութեամբ օղջումներն անշուշտ այն բոլոր Հայերը որ չեն մոռցած ինչ դեր որ ան կատարեն ստեղծող մեր ազգային ու գրական կենսաբնական մէջ, յատակ օճով մը և ուժեղ տրամաբանութեամբ, կ'աշխատեն իրենց զոյգ

տալ ինչպէս որ են, ամէն բան իր տեղը դնել, կարգը և հասարակը շտուգելը՝ որ խախտուած ևն մեր մէջ՝ վերահաստատել և Հայրենիք մասնաշաղկապէս ի վեր հանել — և ալ շատ կարեւոր է, թէպէտ ցաւալիք՝ որ այդքան ընակական բան մը ի վեր հանուելու պէտք ունենայ — անհրաժեշտութիւնը որ կայ մեր պատրաստագրարին և ազգային ժողովին նկրտակութիւնը՝ իբր ամբողջ ժողովուրդին կամքին ըզլումը՝ բարձր պահելու ու և է մասնաւոր կազմակերպութենէ : Ամէն այն Հայերը որ ազատամտութեան շախ կը սիրեն նաեւ գործնական ոգին և Գալ Մարքսեան աւելի կը սիրեն իրենց մայր-ազգութիւնը ու բանաւորութենէն աւելի՝ այն սեռ պատմական բանաւորը որ Հայ ազգ կը կոչուի, պէտք է ուժ տան այդ պայքարին : Խմբուրդ ողջամիտ ճշգրտեան այդ հրապարակաբար իրենքու տարածած գաղափարներուն շուրջը, և հանդարտաբնէ, միթոտով, կողովով ու խելքով աշակերտ առաջնորդելու մեր ցեղին այնքով, կոտորած նաւակը զէպ ի անգոյթ ապուստեանի :

Այդ պայքարին մէջ, կայ սակաւի նկատելու կէտ մը որ կարեւոր է : Եթէ մեր մէջ այդ անքնական, արեւեստական, անցողիկական ձգտումները մտած, մեր ազգային գործունէութիւնը խաթարած և չեղեցեացած են, յանցանքը գահուն ընդգրկող վտերականութեանը չէ, այլ հայ ազգին մեծամասնութեանը, որ ընտաղով, գաստարակութեամբ, չանքով՝ օղջամիտ ուղղութեան կողմնակի ըլլալով հանդիման՝ քան տարբի ի վեր մնաց անտարբի և չօգնել այն խուճկերուն կամ անհատներուն որ կ'ուզէին հակազդել այդ բռնադատին և անխմած ձգտումներուն դէմ :

Օտմանեան Սահմանադրութեան հռչակումէն ի վեր՝ այդեւս արդեւք ու վախ ալ չկայ գործելու : ամէն Հայ կարող է ալմի. հետեւեալք և կրկնապէս պարտաւոր է հրապարակ նետուիլ : կազմակերպութեան մը մաս կապելը, ուղղութեան մը ջատագով և աշակերտ ըլլալը, Հայոց հարիւրին ինչուսներին ոչ հակակղերական է, ոչ Մարքսեան, ողբալի չէ՝ որ այդ ստուար գահեղծող չգալալ իր պատրաստութիւնը հանդէպ ինքզինքին, չգալալ մասնաւոր իր գործութիւնը որ ցարդ անգոյ է որովհետեւ չգործածուած, ու անքնական չգրանդ գործելով իր ըմբռնումը, իր կամքը : Բանի որ սահմանադրական ժողովուրդ մըն ենք, պէտք է մեծամասնութեան կամքը յարգելու : բայց այդ մեծամասնութիւնն ալ պէտք է գիտնալ իր կամքը յարգել ալ : Երբ իրենք իրենց բուն տեղը գտն գաստարակութեան, երբ հայ մեծամասնութիւնը իր շահերուն տեղ ու վարող կանգնի, այն տանի ոչ մէկ վտանգ կամ անպատկուածութիւն կայ որ հայկական կանգնի համայնապատկերին մէկ անկիւնը մենք ալ ունենանք իմքանկոն որ հակակղերական ըլլալ կ'ուզեն կամ Մարքսի քարոզները տարածել :

Բազմի վճական է՝ բախ վերանորոգող կազմակերպողը սահմանադրական օտմանեան պե-

տուածիւնը կը գտնուի այն կանուղ վիճակին մէջ զոր ունին դու տաք մարմինները . եւ որով կարող են ստանալ՝ կարծանալէ առաջ՝ այն ձեւը զոր գէթ երկայն ստեղծ համար մեծ գծերու մէջ պիտի պահեն՝ Հիմալէ է առեւնը որ մինք ալ աշխատելիք տալ նոր կարգութեամբքին՝ այն ձեւերը որ անհրաժեշտ են մեր ցեղային շահերուն պահպանմանը՝ Սեղային շահ՝ ըսելով մենք ո՛չ անկախութիւն, ոչ իսկ ինքնաւարտութեան ձգտում կը հասկնանք . — եւ առիկա՛ պարզապէս ու միայն որովհետեւ կարելիութիւն չկայ, թուրքերը ամենէն տղայամիտ մարդիկը ըլլալու են վախնալու համար արագին պատահալանութիւն մը զոր Համբարձեմի ոճերն ըր եւ մեր սխալները անհնարութեանը սամանը նետեցինք . միակ կարելիութիւնը՝ օտար գրաւումն է . եւ առիկա պիտի ըլլայ երբ Փաւրեթը ծառնկանիմ ոճիւրի (ապա-
 փականութիւնը) : Ուրեմն մեր դիւրքը պարզ . յատկաւ . ուղղամիտ է՝ թուրքերուն հետ : Այս աչապէս ըլլալով, մենք կրնանք, եւ պարտինք, որոշ խախտ թուրքերուն . ու քացէ ի քաց ըսել հետեւալը . « Մենք հայկական թագաւորութիւն կազմելու մտք չունինք , որովհետեւ անկախելի է Մենք . թուրքերոյ մէջ գտնուող Հայերս, Օսմանեան պետութեան մաս կը կազմենք . եւ պիտի կազմենք որքան ատեն որ օտար մեր կամովն անկախ պատ-
 ճանեցնող՝ չգայ մեզ քանդալանով ուրիշ պե-
 տութեան մը մաս կազմելու : Մենք շահ ունինք Օսմանեան պետութեան զօրադաւմին մէջ . եթէ այդ պետութիւնը պիտի մնայ իւրաքանչիւր, Բագրատիւթեան ճամբուն զիտնէ փայլ միայն իրաւունքն ունի . Բայց մենք թուրք չենք, եւ չպիտի ըլլանք , չենք կրնար ըլլալ, ինչպէս որ վարդէ կաղնի չիկր-
 արը ըլլալ, Դուք թուրք էք եւ Օսմանցի, մենք Հայ ենք եւ Օսմանցի : Հայ միայնիս մեզ Հարգելիք հաւատարմութեամբ ու անձնուէք Օսման-
 ցիները ըլլալէ : Ունինք լեզու մը . պատմու-
 թիւն մը , դարձաւ որ գրականութիւն մը . աւանդութիւններ, եւ ցեղային կազմակեր-
 պութիւն մը . ատոնք պիտի պահենք . Միտ-
 հաթ փայայի (Օսմանեան պետութիւնը) կը խռատանա
 անոնց ամբողջական պահպանումը . թուրքիսն
 պիտի ըլլայ Աւստրիա մը եւ ո՛չ Յրանստ : Իրար չխաբենք : Ներթաւանք մենք սկսար հնք,
 կարող է մեզ չարգել , բայց չէք կարող ջնջ-
 ւել մեր ցեղային չնշխութիւնը . զոր հին Ասորեստանացոց օրերէն ի վեր պահպանած ենք :
 Ձեր շահն իսկ կը պահանջէ որ այդ կարգի
 դժուարութիւնները չյարուցանենք : Հիմալուց
 որոշական հասկնանք իրար, եւ համաշխարհոր
 լիյ՜ք ձեռով լայնամիտ ու վիճանձն համաձայ-
 նութիւն մը այս պետութիւնը գէպ ի սեռու-
 թիւն եւ փառք կրնայ առաջնորդել : »
 Այսպէս պէտք է ըսենք թուրքերուն՝ ազգու-
 փն եւ աւերելիս ամեն իրազ պէտք է յառած
 պահելը երկու ամենակարեւոր հետեւի վրայ
 1. Մեր ազգային օսմանագրութիւնը՝ պատ-
 րաւրաբանով, երեսփոխանական ժողովով,
 գաւառային ժողովներով, եւ 2. Մեր պարզ-

ները : Դուրեան պատրիարքին հրաժարականը՝
 Առանայի խեղդին մեծագոյն պատասխանատու-
 ներուն լուրջ պատժումին չեմ կարծեր որ յանգի,
 — այն պարզ պատճառով որ այդ պատասխա-
 նատուները հաւանականորէն կարեւորաձէն աւելի
 շատ են, եւ ենթադրուածն աւելի քարձը
 սեղեր թխառ . քայքայ հրաժարականը ,
 ի քայ առեալ որ արդարութեան ընդհանուր
 սկզբունքի մը ի նպատակ գեղեցիկ ժեխմ
 ըլլալովը պիտի մնայ իւր քարայական մեծ
 արարք մը, սա արդիւնքն ալ ունեցաւ որ
 պատրիարքարաններու իրաւատուութեանց սահ-
 մանը ճշգրիտ հարցը սեղանի վրայ դրաւ :
 Կառավարութիւնը եւ օսմ . քովիմէն պատրի-
 արքները փուլէն կոր Նկատու իւր զուտ կրօ-
 նական պետեր — այս մասին, աւա՛ղ, շատ
 համաձայն են մեր մարքսեան հակադիմադրա-
 նոր-սեղեցականներուն հետ, եւ չն ուզիր կը
 անոնց իրաւունք ծաննալ իրենց ցեղին կառա-
 վարութեան հետ ունեցած կրօնական հարցերուն
 միջամտելու : Արդ, կառավարութեան եւ եր-
 թուրք քովիմէն պէտք է յիշեցնենք որ պատ-
 րիարքը թրքայայտ կրօնական պետ է միայն,
 այլ սուլթանական իրաւունք ձանցուած ու
 վաւերացուած եւ այսօր Օսմ . Սահմանադրու-
 թիւնէն ալ ընդունուած թրքահայ ազգային երես-
 փոխանական ժողովին նախագահը , այդ հաւ-
 ճամբներով աւ իրաւունք ունի՝ շատ ծանրաշիջ
 պարագաներու մէջ՝ իրաւական չեմարիլ օսման
 եւն երեսփոխանական խորհրդարանի հայ երես-
 փոխաններուն ու եւ դիմում կամ բողոքը, եւ
 ինքն իսկ՝ իր պարագայն Ներկայացուցիչը թրք-
 քահայ հասարակութեան՝ դիմում ընել, քարե-
 խօսել, բողոքել կամ հրաժարել յանուն թրքա-
 հայ հասարակութեան շահերուն : Մայրաքիչ ու
 նորեկուկ բան մը չէ մեր ուզածը, այլ յար-
 գումը մեր ազգային օսմանադրութեան, եւ
 այդ սահմանադրութեան քաջարձակ պահպա-
 նումը այնպիսի հարց մըն է որուն վրայ նշա-
 նականք մը չափ գիծով չենք կրնար ընել :
 Գաւթ մեր գլորցնելու. կառավարութիւնն
 ու Ե . Թ . Բովիմէն կ'ընդունին որ ցեղային
 վարժարաններուն պահպանումը՝ ցեղային լեզուի
 տիրապետութեամբ՝ միմիայն նախնական կրթու-
 թեան համար : Մեր երկրորդական վարժարան-
 ներուն համար՝ ըսած չունիք դեռ որ պէտք է
 փակուին , քայքայ հաւանական է որ անոնց փառք
 սպառնայ . կրնն կոր առ այժմ թէ մեր եր-
 կրորդական վարժարաններէն չընտանաւոր եւ-
 լողները չպիտի ընդունուին՝ կառավարական
 պաշտօնի եւ թիւրեւ իսկ օսմանեան համալսա-
 ցուն անոնց մուտքն ալ դժուարացուի , որպէս զի
 ոչ-թուրք տղաքը ստիպուին կառավարական
 երկրորդական գլորցնելը յաճախել : Աւելի
 ամենէն եական հարցն է, որուն վրայ ոչ միայն
 թրքայայտ, այլ աշխարհիս շորս միկնն Հայոց
 ուշադրութիւնը պէտք է լարուի այս պահուն :
 Անցեալ տարի Պոլիս գտնուած միջոցի , Օսմ .
 խորհրդարանին Պոլսէն ընտրուելիք հայ երես-
 փոխաններուն համար ծրագիր մը պատրաստող
 խորհրդականական ժողովներուն մէջ , որոնց պա-

ախ ունեցայ մասնակցիլ, այդ հարցին վրայ երկաթորոնք վիճակեցաւ, եւ մեծամասնութիւնը յանգեցաւ՝ յանուն սխալ ազատականութեան արեւելի երդագրացութեանց որ վստահաւոր են րաւ իս. այդ եկրակապութիւններն էին հետեւեալները. 1. Կառավարութիւնն պահանջել մեր հայկական գարօններուն համար պետական նպատակն բաժարել, ի փոխարէն կրթական տուրքին գոր կը վճարուի. 2. Պետական նախակրթարաններուն եւ երկրորդական վարժարաններուն մէջ պահանջել հայերէն լեզուի ուսուցում. 3. Հայոց զգարոններուն մէջ նախակրթութիւնը պիտի կատարուի մայրենի լեզուով՝ որովհետեւ մանկավարժական օժանդակով այդ աւելի դիւրութիւն կ'ընծայէ մանուկին: Երկրորդական վարժարաններուն հարցը կը մնար հոն տարտամ, երկրորդի մէջ մը մէջ թաքեալ: Ասոնց դէմ՝ ինչքան որ կը յիշեմ՝ երկու հոգի միայն բողոքեցին, Պ. Պետրոս Հայաճեան եւ այս սողորը դրողը: Կը կրնայիմ հոս ինչ որ բար արն տանն: Մեր ցեղային նախակրթարաններն ու երկրորդականներն ունենալով մանկավարժական տեսակետներու պէտք չունի ինքզինքն արդարացնելու համար, մեր անկապուելի իրաւունքն է՝ դարեւն ի վեր պետութեանէն ճանչցուած, եւ մեզի համար՝ օգին ու բուրնի չափ անդաժեցաւ. անոնք մեր պատրիարքարանին ու ազգային ժողովին ղեկավարութեան տակ են, եւ հայ ազգը կը պահպանէ գանտըք ու պիտի պահպանէ միշտ իր դրամովը. կառավարութիւնը բացարձակ իրաւունք ունի հակել անոնց վրայ, անոնց ծրարիւրը եւ ուսուցումը քննելու. եւ մենք որովհետեւ ոչ մէկ միտք ունինք գանտըք հակապետական գաղափարներու լոյն գարծնելու, կ'ընդունինք անին հակադրութիւն ու վերաբնութեւն. բայց կառավարութիւնէն նպաստ չենք ուզեր, որպէս զի ստով պետական վարժարաններու հանգամանք տուած է եւ անոնց յարաբերական ինքնուրուշութիւնը ատով մեր իսկ նախաձեռնութեամբ փնջացուցած չըլլանք. մեր կրթական տուրքին փոխարէն՝ կառավարութիւնը մեր աշակերտները պէտք է ձերպաշտ ընդունի, ինչպէս թուրք ուսանողները, պետական համալսարաններուն մէջ՝ այդ բաւական է: Մեր օսանքն իսկ հաւաք, մենք մեր նախակրթարաններուն ու երկրորդական վարժարաններուն ծրարիւր պիտի պատշաճեցնենք պետական նմաթիւնակ հաստատութիւնէն ծրագրին՝ ի բաց տեսել ինչ որ իսպառ ունի մեր ցեղային մտաձգական, իսկ թուրք լեզուն, գրականութիւնն ու պատմութիւնը պիտի ուսուցանենք եթէ կարելի է՝ աւելի խնամքով քան պետական վարժարաններուն մէջ. հայ ազգը շատ լաւ կարող է աւելա ընել. ատոր համար հարկ եղած միջոցներն ունի, պէտք է միայն կամք եւ լաւ կրթականը պիտի ունենանք: Երբ մեր զգարոններն այս փնջակն մէջ ըլլան, անոնց շրջանաւարտները կարող պիտի ընդունան:

պետական երկրորդական վարժարանի շրջանաւարտներու քննութիւնը, եւ համարժէք նկատուիլ անոնց ու վայելիլ անոնց իրաւունքները: Գաղով պետական նախակրթարաններուն ու երկրորդական վարժարաններուն մէջ հայերէնի (ինչպէս յունարէնի, եւն) ուսուցման, մեր պայն պահանջելը միայն չունի, բայց աւելորդ է. կառավարութիւնը ինքնին իր շահուն համար՝ պիտի ընէ արդէն զայդ, որպէս զի ոչ-թուրք ուսանողները հրապուրէ եւ քաշէ դէպ ի պետական վարժարանները:

Մեր պարտականութիւնը հանդէպ հայ ցեղի պատմութեան, լեզուին, գրականութեան, կը պահանջէ որ մենք այս կերպ զննք հարցը: Հոս ալ արդէն ոչ ծայրայիշ ոչ նոր ան մըն է ուզածնիս, այլ պահպանումը իրերու դրութեան մը, որ գոյութիւնն ունի զարիւրէ ի վեր: Արիշ քան՝ եթէ ըսնի ուժով մեր ձեռքէն կապտին այդ իրաւունքը: Մենք մեր ձեռքով պէտք չէ որ հրէի մը չափ զիջում բրած ըլլանք: Ու եւ կը տարակուսիմ որ ոչ-թուրք բոլոր ցեղերուն կողմէ այդ մասին յայտնուած համաձայնութեան մը հանդէպ (եւ այդպէս ալ պիտի ըլլայ) կառավարութիւնը խորի թուուն միջոցներ ձեռք առնել այդպիսի փոփոխութիւն կ'կատարուի: Պէտք է գիտնալ որ այդ պարագային՝ մեր սահմանադրութեան եւ զգարոններուն վստահութեւնը րոպէին՝ ամբողջ թրքաւայ հասարակութեան վրայէն կորնիլ անցնիլ պէտք պիտի ըլլայ. — ինչպէս եւ ամբողջ միւս ոչ-թուրք զգարութեանց:

Արապեւ ուրեմն կառավարութեան հանդէպ՝ այս էական հարցերուն վրայ ամուր Եւ անդինքն ունի, մեզ դրացի ցեղերուն հետ մեր յարաբերութեանց մէջ զգուշաւոր, շրջանայեաց ու ճարպիկ, այնքան ուշադիր եւ հոգածու մեր ցեղային զարգացման որքան Պետութեան ընդհանուր վերանորոգման, այնքան հաւատարմամբ տոմարական աւանդութեանց որքան օսմանեան հայրենիքի շահերուն, լրբօրէն զանադի՝ Պետութեան մէջ այժմ սկսող մտադրական, ճարտարարարութեան, վաճառականական մեծ մրցման մէջ մեր պատուոյ տեղը գրաւելու, քաղեքը յարուհետեւ հեղափոխութեամբ, պահարկութեամբ, խանգը հողիտես բայց եւ գործնական օգին մտքերնուս մէջ, չմոռնալով մեր սուգները, բայց եւ սրտապնդուելով մեծութեանը մեր Առաքելութեանը զոր կատարած ենք եւ դեռ պիտի կատարենք:

Ա. ԶՊԱՆԱՆԱՆ

Փարիզ, 7 Հոկտեմբ. 1909